ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2020 թվականի №---Ա
ք.Երևան

«ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0660 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №481Ա որոշմամբ «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0660 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ№0660 լիցենզիա)՝ մինչև 2041 թվականի դեկտեմբերի 25-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը,

բ) «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի ապրիլի 29-ի գրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2020 թվականի փետրվարի 17-ին տեղի է ունեցել «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվանման փոփոխություն, սակայն Ընկերությունը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի դիմել Հանձնաժողով ԼԷ№0660 լիցենզիայի վերաձևակերպման համար,

գ) Կարգի 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

դ) Հանձնաժողովը 2020 թվականի մայիսի 11-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 90-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի մայիսի 15-ի գրությամբ կատարված խախտումը պատճառաբանել է որպես անուշադրության հետևանք, ինչպես նաև նույն գրությամբ խնդրել է Ընկերության անվանափոխության հիմքով վերաձևակերպել ԼԷ№0660 լիցենզիան՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 90-րդ կետի պահանջները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №481Ա որոշմամբ «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ԼԷ№0660 լիցենզիան վերաձևակերպել «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ:
2. Կարգի 90-րդ կետի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2020թ.